



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
21-րդ դարի մարտահրավերներ
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
S 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր
ԽՈՐԵՆ ՄԻՆԻԹԱՐՅԱՆ - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ
ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

GOHAR MANUKYAN
PRINCIPLES OF CHANGE MANAGEMENT SUCCESS

Key Words: change, change management, leadership, vision of future, short-term goals, strategic plan, communication, project management, benchmarking, gap analysis

Organizations that are striving to a long-term success cannot avoid changes because the environment itself bears frequent changes. On-time and correctly organized change management will ensure the companies adjust to these changes, keep their competitive advantages and position in the market. The effective model of a change management is unique for each company, but to succeed they need to ensure employees' involvement, maximum communication, good leadership and maintenance of project management principles.

ԱՏՈՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

ՏԱԹԵՎ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Ասպիրանտ, ՀՊՏՀ

**ԿԼԱՍՏԵՐՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ
ՆՈՐԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆ**

Հիմնաբառեր. կլաստեր, նորաստեղծություն, ինովացիոն համակարգ, ինստիտուտներ, զարգացում

Հողվածում քննարկվել են նորաստեղծությունների զարգացումը պայմանավորող հիմնապայմաններից մեկի՝ կլաստերների ինստիտուցիոնալ համակարգի ազդեցությունները: Ուսումնասիրվել ու համադրվել են կլաստերային համակարգում առկա կառուցվածքային բաղադրիչներն ու դրանց ֆունկցիոնալ փոխներգործությունները: Հիմնավորվել է այն թեզը՝ ըստ որի նորարարական ընկերությունները կարող են իրենց մրցակցային առավելությունները լիարժեքորեն իրացնել, եթե օրգանապես ներգրավվեն կլաստերային կառուցվածքներում:

Վերջին տասնամյակներում նորամուծությունների ինտենսիվ հետազոտությունները չէին կարող շրջանցել կլաստերների ուսումնասիրությունը, ինչպես նաև վերջիններիս կապը ինովացիոն քաղաքականության և, առհասարակ, ինստիտուցիոնալ փոփոխությունների հետ: Տնտեսությունում տեղական խաղացողների նորաստեղծական հակվածության բարձրացման գործում ժամանակակից տնտեսագիտությունը կարևոր դեր է հատկացնում կլաստերների ձևավորմանը:

Ինչպես նշում են Բերգմանն ու Ֆեզերը, կլաստերներն իրենց արտաքին էֆեկտներով (էքստերնալներով) նպաստում են նորաստեղծությունների ի հայտ գալուն, դրանք էլ, իրենց հերթին, կախված են այն ինստիտուտներից և ինստիտուցիոնալ մեխանիզմներից, որոնց շրջանակում ձևավորվում և զարգանում են: Այս թեման մշտապես եղել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում, բացի այդ, քաղաքական գործիչների և քաղաքականություն մշակողների ձեռքին որպես գործիք է ծառայել համապատասխան փոփոխությունների իրականացման համար: Վերը նշված կապերի և վերլուծությունների հայեցակարգը 1990-ականների սկզբին ներկայացրել է Մայքլ Փորթերը (1990 թ., 1998 թ.), ով առաջիններից մեկն էր, որ տվեց կլաստերի ժամանակակից սահմանումներից ամենատարածվածը և հետազոտողների ուշադրությունը սևեռեց տվյալ հիմնախնդրի վրա:

Նորարարության հետազոտողներն (Freeman¹, 1987, Lundvall², 1992, Nelson, 1993, Edquist, 1997 թ.) ընդգծում են, որ կլաստերը չի կարելի դիտարկել մեկուսի, այլ փոխազդեցություն մեջ՝ ինչպես ընկերության ներսում, այնպես էլ ընկերությունների, ընկերությունների և գիտելիք գեներացնող ու արտադրող կազմակերպությունների միջև, ինչպիսիք են համալսարանները և հետազոտական ինստիտուտները (Coenen, 2006 թ.): Որպեսզի հասկանանք, թե ինչպես կլաստերները կարող են խթանել նորարարությունը, պետք է ուսումնասիրել, թե ինչպես է տեղի է ունենում դրանց փոխգործակցությունը: Այս հիմնադրույթին անդրադառնալիս ինստիտուցիոնալ տնտեսագետները (Նորթ, 1991 թ., Հոջսոն, 2006 թ.) փորձում են վերլուծել, թե ինստիտուտներն ինչպես են ազդում կլաստերներում փոխազդեցությունների վրա, որոնք էլ, իրենց հերթին, խթանում են նորարարությունը:

Չնայած նրան, որ ընդհանուր ինովացիոն ենթակառուցվածքներն ու ինստիտուտներն են սահմանում նորարարության հիմնական պայմանները, ի վերջո, ընկերություններն են ներկայացնում և առևտրայնացնում նորարարությունները:

Հստակ հասկանալու համար, թե ինչպես կլաստերային գործունեությունը կարող է ստեղծել համապատասխան ինստիտուցիոնալ, գիտելիքների փոխանակման և նորարարության խթանման միջավայր, քննարկենք Լոուրենսի և Սուդաբիի մշակած *ինստիտուցիոնալ աշխատանքների* հիմնադրույթը (2006 թ.): Ինստիտուցիոնալ աշխատանքը նկարագրվում է որպես ինստիտուտների ստեղծման, պահպանման և խափանման նպատակով անհատների և կազմակերպությունների նպատակային գործողություն³: Հատկանշական է, որ հետազոտողները շեշտը դնում են նրա վրա, թե ինչպես են կլաստերների մասնակիցների գործողություններն առաջացնում ինստիտուտներ, այլ ոչ հակառակը:

Լուրենսը և Սուդաբին դիտարկում են ինստիտուտների գործառույթների ինը

¹ By Charles Edquist (2001). The Systems of Innovation Approach and Innovation Policy: An account of the state of the art.

² Bengt-Åke Lundvall (2006). Innovation System Research and Policy Where it came from and where it might go. Aalborg University. Paper to be presented at CAS Seminar, Oslo, December 4, 2007.

³ Lawrence, T. B. and Suddaby R. (2006), Institutions and Institutional Work, in Sage (dir) Handbook of organization studies, Londres: p. 215-254.

հստակ խմբեր, որոնցում ներգրավված կազմակերպչական դերակատարներն ի վերջո հանգեցնում են նոր ինստիտուտների ստեղծմանը: Այս ինը գործառույթները ներկայացվում են գործունեության ավելի լայն երեք կատեգորիայով՝ քաղաքական աշխատանք, նորմատիվ աշխատանք և կոգնիտիվ (քողարկված) աշխատանք:

Նորամուծություն և նոր տեխնոլոգիաների առևտրայնացում տեղի է ունենում առավելապես կլաստերների միջոցով: Կլաստերի հատուկ նորարարական միջավայրը նկարագրված է «Ադամանդ» ծրագրի շրջանակներում¹: Նախ՝ քննարկենք, թե ինչ է կլաստերն ըստ էության: Ըստ Պորտերի՝ կլաստերն աշխարհագրորեն միահյուսված ընկերությունների և ինստիտուտների միացումն է որոշակի ճյուղում²: Նկատենք, որ կլաստերը ներառում է նաև մի շարք պետական կառավարման տարրեր և ինստիտուցիոնալ միավորներ: Որպես միավոր՝ այն կարող է հիշեցնել ազգային ինովացիոն համակարգի պրոյեկցիան մեզումիջավայրում:

Միկրոմակարդակի միջավայրի չորս բաղադրիչներն ազդում են կլաստերի նորարարության աստիճանի, ինչպես նաև դրա մրցունակության վրա: Բարձրացնելով արտադրողականությունն ու էֆեկտիվությունը կլաստերը ընկերություններին մղում է դեպի ավելի շատ նորարարությունների:

Ինստիտուտները մեխանիզմներ են, որոնք հնարավորություն են տալիս մասնակիցներին մի շարք գործիքներով (ֆինանսական, բանակցային) փոխգործակցելու և ստիպելու ու կենտրոնացնելու սոցիալական վարքը՝ տրամադրելով պարզևատրումներ և պատիժներ, որոնք մասնակիցներին տալիս են խթաններ՝ մասնակցելու փոխանակման գործընթացներին և ստանձնելու նախկինում ընդունված պարտավորությունները:

Կլաստերն իր մասնակիցներին տրամադրում է մի շարք առավելություններ, որոնք ապահովում են ձգողության (կենտրոնաձիգ) էֆեկտ, ինչը որոշում է կլաստերի գոյության և նոր մասնակիցների ներգրավման նպատակահարմարությունը: Այս առավելություններն ընդունված է բաժանել 3 խմբի՝ արտադրական գործունեության արդյունավետության բարձրացում, ինստիտուցիոնալ (այդ թվում՝ տրանսակցիոն (գործարքային) ծախսերի տնտեսում) և ինովացիոն առավելություններ: Վերլուծենք կլաստերում նորաստեղծական առավելությունների ձևավորման գործընթացը:

Կան երկու հիմնական հիմնարար պատճառներ, որոնց շնորհիվ ինովացիոն զարգացմամբ շահագրգռված ձեռնարկությունները կենտրոնանում են կլաստերների մեջ: Առաջին հերթին՝ նոր գիտելիքներն ունեն անհատականացված (չկողավորված) մաս և տարածվում են անձնական կապերի միջոցով: Ըստ Պ. Դերոշեի՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում կարևոր գիտելիքը ոչ ստանդարտ ինֆորմացիա է, ոչ էլ գիտական հրատարակում: Դա նաև այն տեղեկությունը չէ, որը կարելի է ստանալ մարքեթինգային վերլուծության արդյունքում: Ի՞նչն է իրականում կարևոր բիզնեսի համար. նորագույն գիտելիքներ, վերջին իրադարձությունների ու փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն,

¹ http://www.hbs.edu/faculty/Publication%20Files/Innov_9211_610334c1-4b37-497d-a51a-ce18bbcf435.pdf

² Harward business review. THE NOVEMBER-DECEMBER 1998 ISSUE, Michael E. Porter Clusters and the New Economics of Competition.

որոշակի մարդկանց՝ սխալների հիման վրա ձեռք բերած փորձ: Փոխգործակցող սուբյեկտները կապ չունեն միմյանց հետ, որի վառ ապացույցը ինովացիոն ակտիվության անհամաչափ բաշխումն է տնտեսությունում:

Երկրորդ հերթին՝ ինովացիոն գործունեությունը նախատեսում է բազմաթիվ տարատեսակ կազմակերպությունների հետ (մատակարարների, արտադրողների, վաճառողների, սպառողների, ֆինանսական կազմակերպությունների և այլն) համաձայնեցված գործողություն: Յուրաքանչյուր ինովացիայի համար անհրաժեշտ են գործընկեր-սպառողներ և գործընկեր-մատակարարներ: Որքան արմատական (ռադիկալ) է ինովացիան, այնքան ամուր պետք է ներգործեն այլ խաղացողները, հատկապես՝ սպառողները: Անգամ վեճուրային կապիտալիստները, որպես կանոն, միջոցներ են ներդնում հարևան ընկերություններում: Ինովացիոն կազմակերպության աշխարհագրական տեղայնացման անհրաժեշտությունը հաստատվել է փորձով:

Այսպիսով՝ ինովացիոն ակտիվության լիարժեք դրսևորման համար ձեռնարկությունները պետք է տեղաբաշխվեն և գործեն կլաստերների շրջանակներում, որոնք ներկայացնում են միմյանց հետ փոխկապված, մրցակցային առավելությունները կատարելագործող, աշխարհագրական տարածքով մոտ և գործունեության ընդհանուր շրջանակով միավորված կազմակերպություններ:

Այս ամենը նպաստում է՝

- նոր գիտելիքների ձեռքբերման ծախսերի կրճատմանը (դրանք ունեն անհատականացված բնույթ) և նորամուծության ստեղծմանը (նոր գիտելիքի տարածումը հանգեցնում է դրա կրկնապատկմանը),
- նորամուծական պարբերաշրջանի տևողության կրճատմանը,
- ֆիրմաների նորարարական գործունեության ակտիվությանը՝ մյուս ընկերություններից «եկող» ինովացիայի հաշվին,
- գնորդների խստապահանջության մակարդակի բարձրացմանը և մրցակցային պայքարի սրմանը:

Բազմաթիվ միատեսակ կամ գործունեությամբ իրար մոտ ընկերությունների առկայությունը կլաստերում մեծացնում է պահանջարկը և սրում մրցակցությունը: Մ.Պորտերը մեծ ուշադրության էր արժանացնում ներքին մրցակցությանը՝ որպես ընկերությունների ինովացիոն ակտիվության խթանման գործոն:

Այսպիսով՝ ինովացիոն զարգացմամբ շահագրգռված ընկերությունները բոլոր հիմքերն ունեն ընդգրկվելու կլաստերներում: Նման տեղաբաշխումը դրական է անդրադառնում ձեռնարկության ինովացիոն ակտիվության վրա, ինչն ապացուցված է միջազգային էմպիրիկ հետազոտություններով: Բացի այդ, ժամանակակից տնտեսությունում ընկերության համար գերադասելի է անընդհատ կատարելագործել մրցակցային առավելությունները նորարարությունների միջոցով, իսկ կլաստերից դուրս գտնվելով՝ վտանգվում է նման ֆիրմաների, ինչպես նաև ողջ տարածաշրջանի մրցունակությունը:

Մի կարևոր դիտարկում ևս. կլաստերները ինստիտուցոնալ տեսանկյունից ի հայտ են բերում նաև հանրային բարիքի այլընտրանքային մատակարար՝ նպաստելով մասնա-

վոր հատվածում արտադրողականության մակարդակի բարձրացմանը: Ձեռնարկությունների ներդրումները վերապատրաստման ծրագրերում, ենթակառուցվածքներում, որակի կենտրոններում, փորձարկման լաբորատորիաներում և այլուր նույնպես կարող են դիտարկվել որպես ինովացիոն զարգացմանն ուղղված հանրային բարիքներ, որոնք նպաստում են արտադրողականության բարձրացմանը: Նման մասնավոր ներդրումները հաճախ կատարվում են միասին և ոչ բացահայտ առևտրային նկատառումներով, քանի որ կլաստերի մասնակիցները ճանաչում են կոլեկտիվ շահի ներուժը:

**АТОМ МАРГАРЯН
ТАТЕВ ХАЧАТУРЯН**

ИНСТИТУЦИОНАЛЬНАЯ СИСТЕМА КЛАСТЕРОВ КАК СТИМУЛ РАЗВИТИЯ ИННОВАЦИЙ

Ключевые слова: кластер, инновация, инновационная система, институты, развитие

В статье обсуждается влияние одного из фундаментальных условий развития инноваций - институциональной системы кластера. Изучены и сопоставлены структурные компоненты и их функциональные взаимодействия в кластерной системе. Обоснован тезис о том, что инновационные компании могут полностью реализовать свои конкурентные преимущества, если они органически включены в кластерные структуры.

**АТОМ МАРГАРЯН
ТАТЕВ ХАЧАТУРЯН**

INSTITUTIONAL SYSTEM OF CLUSTERS AS A STIMULS FOR DEVELOPMENT OF INNOVATION

Key Words: cluster, innovation, innovation system, institutions, development

The article discusses the influence of one of the fundamental conditions for the development of innovation - the institutional system of the cluster. Structural components and their functional interactions in a cluster system are studied and compared. The thesis is grounded that innovative companies can fully realize their competitive advantages if they are organically included in cluster structures.